

Լրացուցիչ տեղեկություններ պարունակող ծանուցում Ձեր իրավունքների և նպաստների մասին

1. Ի՞նչ է «Medi-Cal Dental Managed Care»-ի (DMC) ծրագիրը:

«Medi-Cal» DMC-ի ծրագիրը Ձեր ատամնաբուժական նպաստները համակարգում է Ձեր շրջանում աշխատող ատամնաբույժների հետ՝ Ձեզ «Medi-Cal»-ի ապահովագրական ծածկույթի մեջ մտնող ծառայություններ տրամադրելու համար: «Medi-Cal» DMC-ի անդամները պետք է հիմնականում «Medi-Cal» DMC-ի իրենց ծրագրի սպասարկողների ցանցում ընդգրկված ատամնաբույժների ծառայություններից օգտվեն:

Եթե Դուք ապրում եք **Sacramento-ի շրջանում**, Դուք պետք է «Medi-Cal» DMC-ի ծրագիր ընտրեք՝ մի քանի բացառություններով:

Եթե Դուք ապրում եք **Los Angeles-ի շրջանում**, կարող եք կա՛մ անդամագրվել «Medi-Cal» DMC-ի որևէ ծրագրի, կա՛մ կարող եք ընտրել «Medi-Cal Dental» Fee-For-Service-ը (FFS):

2. Կարո՞ղ եմ ես պահել իմ ատամնաբույժին, եթե նա ընդգրկված չէ «Medi-Cal» DMC-ի իմ նոր ծրագրի ցանցում:

Եթե վերջին 12 ամիսների ընթացքում Դուք այցելել եք «Medi-Cal» մի ատամնաբույժի, որը «Medi-Cal» DMC-ի Ձեր նոր ծրագրի ցանցում ընդգրկված չէ, հավանաբար Դուք կկարողանաք ժամանակավորապես պահել Ձեր այդ ատամնաբույժին, եթե Ձեր նոր ծրագրից «չընդհատվող խնամք» (continuity of care) խնդրեք:

Չընդհատվող խնամքը Ձեզ հնարավորություն է տալիս «Medi-Cal» DMC-ի նոր ծրագրին անդամագրվելուց հետո մինչև 12 ամիս պահել «Medi-Cal»-ի Ձեր ատամնաբույժին:

Ձեր ատամնաբույժը կարող է համաձայնել աշխատակցել «Medi-Cal» DMC-ի նոր ծրագրի հետ: Դա կարող է մինչև 12 ամիս տևել: Եթե Ձեզ չընդհատվող խնամք է հարկավոր, «Medi-Cal» DMC-ի նոր ծրագրին անդամագրվելուց հետո զանգահարեք «Medi-Cal» DMC-ի Ձեր նոր ծրագրի անդամների սպասարկման բաժին: Եթե Ձեր ատամնաբույժը **չհամաձայնի** աշխատել «Medi-Cal» DMC-ի Ձեր նոր ծրագրի հետ, ծրագիրը կօգնի Ձեզ նոր ատամնաբույժ գտնել:

«Medi-Cal» DMC-ի Ձեզ հասանելի ծրագրերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **www.healthcareoptions.dhcs.ca.gov**:

3. Ի՞նչ անել, եթե ինձ ժամադրություն է նշանակված XX/XX/XXXX-ին կամ դրանից հետո:

Ձեր ներկա ատամնաբույժի հետ միասին ժամադրությունները համաձայնեցրեք «Medi-Cal» DMC-ի Ձեր նոր ծրագրի հետ: Ձեր ատամնաբույժին կարող է անհրաժեշտ լինել Ձեր նոր ծրագրի համաձայնությունը ստանալ՝ նախքան Դուք նոր այցելության կամ ծառայության ժամադրություն կստանաք:

4. Կարո՞ղ եմ ես պահպանել «Medi-Cal»-ի մասնագետի մոտ նշանակված ժամադրությունները:

Եթե Դուք մինչև «Medi-Cal» DMC-ի նոր ծրագրին անդամագրվելն եք ժամադրություն ստացել «Medi-Cal»-ի մասնագետի մոտ, հնարավոր է, որ կարողանաք պահպանել այդ ժամադրությունը:

Ծրագրին անդամագրվելուց հետո զանգահարեք «Medi-Cal» DMC-ի Ձեր ծրագրի անդամների սպասարկման բաժին: Հարցրեք «Medi-Cal» DMC-ի Ձեր ծրագրին, թե արդյոք կարող եք պահել այդ ժամադրությունը: Հնարավոր է, որ մասնագետն արդեն ընդգրկված լինի «Medi-Cal» DMC-ի Ձեր նոր ծրագրի ցանցում կամ կարող է համաձայնել մաս կազմել այդ ցանցին:

5. «Medi-Cal» DMC-ի ծրագրին անդամագրվելուց հետո ես պե՞տք է նոր արտոնություն ստանամ:

Եթե Դուք «Medi-Cal»-ի այնպիսի մի ծառայություն կամ բուժում եք ստանում, որը նախնական արտոնություն (թույլտվություն) չի պահանջում, կարող եք շարունակել ստանալ այդ ծառայությունը կամ բուժումը: Եթե Ձեզ անհրաժեշտ է XX/XX/XXXX-ից հետո էլ շարունակել ստանալ այդ ծառայությունը կամ բուժումը, ապա ծրագրում ընդգրկվելուց հետո զանգահարեք Ձեր «Medi-Cal Dental Managed Care» Ծրագրի անդամների սպասարկման բաժին:

Եթե Դուք «Medi-Cal»-ի որևէ ծառայության համար ներկայումս գործող արտոնություն եք ստացել Ձեր ատամնաբույժից, կարող եք շարունակել տվյալ արտոնությամբ ստանալ այդ ծառայությունը:

Եթե «Medi-Cal»-ի Ձեր ատամնաբույժն ընդգրկված չէ «Medi-Cal» DMC-ի Ձեր նոր ծրագրի ցանցում, ապա XX/XX/XXXX-ին և դրանից հետո Ձեզ կարող է անհրաժեշտ լինել նոր ատամնաբույժի մոտ շարունակել Ձեր ծառայությունը կամ բուժումը: Պարզելու համար, թե արդյոք Ձեր ատամնաբույժն ընդգրկված է «Medi-Cal» DMC-ի Ձեր նոր ծրագրի ցանցում, զանգահարեք ծրագիր: Եթե Ձեր ատամնաբույժը Ձեր նոր ծրագրի ցանցում ընդգրկված չէ, կարող եք չընդհատվող խնամք խնդրել, ինչպես նկարագրված է 2-րդ Բաժնում:

6. Ի՞նչ անեմ եթե հաշիվ ստանամ վճարման համար:

Եթե Դուք հաշիվ ստանաք Ձեր ատամնաբույժից կամ «Medi-Cal» DMC-ի Ձեր ներկա ծրագրից, զանգահարեք «Medi-Cal» DMC-ի Ձեր նոր ծրագիր:

նրանք կասեն, թե արդյոք անհրաժեշտ է վճարել: Եթե Դուք ծրագրի ցանցում չընդգրկված ատամնաբույժից ծառայություն եք ստացել՝ առանց «Medi-Cal» DMC-ի Ձեր ծրագրի արտոնության, ապա հնարավոր է, որ ստիպված լինեք ինքներդ վճարել Ձեր ստացած հաշիվը:

Եթե Դուք հաշիվ ստանաք այնպիսի մի ծառայության համար, որը ստացել եք «Medi-Cal» DMC-ի Ձեր **նոր** առողջապահական ծրագրից, զանգահարեք Ձեր նոր ծրագիր և պարզեք, թե արդյոք Ձեզ անհրաժեշտ է վճարել դրա համար:

7. Ինչպե՞ս «Medi-Cal» DMC-ի ծրագիր ընտրեմ:

Ընտրությունը կախված է այն բանից, թե որ շրջանում եք Դուք ապրում:

Եթե Դուք ապրում եք **Sacramento-ի շրջանում**, Դուք պետք է «Medi-Cal» DMC-ի ծրագիր ընտրեք: Եթե Դուք ապրում եք Sacramento-ի շրջանում և «Medi-Cal» DMC-ի ծրագիր չընտրեք, ապա «Department of Health Care Services»-ը (DHCS) «Medi-Cal» DMC-ի ծրագիր կընտրի Ձեզ համար:

Եթե Դուք ապրում եք **Los Angeles-ի շրջանում**, Դուք կարող եք անդամագրվել «Medi-Cal» DMC-ի որևէ ծրագրի: Կամ կարող եք ընտրել «Medi-Cal Dental»-ի Fee-For-Service-ը (FFS):

Եթե Դուք ապրում եք **San Mateo-ի շրջանում**, Դուք ատամնաբուժական ծառայություններ կստանաք «Health Plan of San Mateo»-ի (HPSM) կամ «Medi-Cal Dental» FFS-ի միջոցով:

- Եթե Դուք ընդգրկված եք HPSM-ում, Դուք ատամնաբուժական ծառայություններ կստանաք HPSM-ի միջոցով: HPSM-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք անդամների սպասարկման բաժին՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-750-4776 (TTY՝ 1-800-735-2929) հեռախոսահամարով:
- Եթե Դուք «Kaiser»-ի անդամ եք, Դուք ատամնաբուժական ծառայություններ կստանաք «Medi-Cal Dental» FFS-ի միջոցով: Ատամնաբուժական սպասարկող գտնելու համար կարող եք զանգահարել ատամնաբուժական «Medi-Cal»-ի հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 1-800-322-6384 (TTY՝ 1-800-735-2922) հեռախոսահամարով՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 5-ը:

Դուք կարող եք հեռախոսով անդամագրվել «Medi-Cal» DMC-ի որևէ ծրագրի: Զանգահարեք «Medi-Cal Health Care Options» (HCO)՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով: Կամ անդամագրվեք առցանց՝ այցելելով **www.healthcareoptions.dhcs.ca.gov**:

Դուք իրավունք ունեք ցանկացած ժամանակ փոխելու «Medi-Cal» DMC-ի Ձեր ծրագիրը: Զանգահարեք «Medi-Cal» HCO՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին,

առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077)
հեռախոսահամարով: Կամ այցելեք www.healthcareoptions.dhcs.ca.gov:

8. Ի՞նչ է «Medi-Cal Health Care Options»-ը:

«Medi-Cal Health Care Options»-ը (HCO) ծառայություն է, որը ծրագրի անդամներին օգնում է տեղեկություններ ստանալ «Medi-Cal»-ի ծրագրերի մասին: «Department of Health Care Services»-ն առաջարկում է այս ծառայությունը, որպեսզի օգնի անդամներին ճիշտ ընտրություններ կատարել «Medi-Cal»-ի իրենց ապահովագրության հարցում:

«Medi-Cal» HCO-ի կայքը գտնվում է www.healthcareoptions.dhcs.ca.gov հասցեում:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք «Medi-Cal» HCO՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով:

9. Կարող եմ ես անդամագրվել «Program of All-Inclusive Care for the Elderly» (PACE) ծրագրին:

Եթե Դուք 55 տարեկան կամ ավելի մեծ եք և տանն ապրելու համար ավելի բարձր մակարդակի խնամքի կարիք ունեք, հնարավոր է, որ իրավունակ լինեք մասնակցելու Ձեր տարածքում գործող որևէ PACE ծրագրի:

PACE-ը Ձեզ բժիշկների, բուժքույրերի, թերապևտների, վարորդների, տնային խնամողների, սոցիալական աշխատողների, գործողությունները համակարգողների և սննդաբույժների պրոֆեսիոնալ խումբ է տրամադրում: Նրանք կհամակարգեն Ձեր բուժապասարկումը, տնային խնամքը, փոխադրումները և մասնագիտացված օգնությունը՝ ինչպես ատամնաբուժական օգնությունը և լսողական սարքերը:

PACE-ի միջոցով ստացած խնամքի մեծ մասը PACE-ի կենտրոններում է տրամադրվում: Դուք կարող եք նաև մասնակցել նրանց սոցիալական ծրագրերին և օգտվել տարեց անձանց համար նախատեսված նրանց մարզասրահներից: Երբեմն Ձեզ խնամող խումբը ծառայությունները Ձեր տանն է մատուցում:

Եթե Դուք որոշեք անդամագրվել PACE ծրագրին, Դուք դուրս կհանվեք «Medi-Cal» DMC-ի Ձեր ծրագրից, քանի որ այդ դեպքում բոլոր ատամնաբուժական ծառայությունները տրամադրվում են PACE ծրագրի կողմից:

PACE-ին անդամագրվելը կամավոր է: Դուք կարող եք ցանկացած ժամանակ դուրս գալ ծրագրից: PACE-ում ընդգրկվելը ենթադրում է դիմելու և դիմումի քննարկման գործընթաց: Դա ներառում է առողջության գնահատում, պարզելու համար, թե ինչ տեսակի խնամք է Ձեզ հարկավոր: Այս գործընթացը կարող է մի քանի շաբաթ տևել: Եթե Դուք «Medi-Cal» ունեք, ապա PACE-ին անդամագրվելն այլ համավճարումներ կամ չապահովագրված մասի վճարումներ չի պահանջում:

PACE-ի ծառայությունները ներառում են, բայց ոչ միայն՝

- բժշկի և մասնագետի այցելություններ,
- հիվանդանոցային խնամք և վիրահատություններ,
- շտապ և հրատապ բուժօգնություն,
- ակնաբուժական և ատամնաբուժական ծառայություններ,
- դեղատոմսային դեղեր,
- ֆիզիոթերապիա, աշխատաբուժություն և խոսքաբուժություն,
- տնային բուժօգնություն,
- վարքաբուժական ծառայություններ,
- սարքավորումներ և բժշկական պարագաներ,
- փոխադրամիջոց PACE-ի կենտրոններ և բժշկի ժամադրությունների գնալու և վերադառնալու համար,
- խորհրդատվություն սննդամթերքի հարցերով և պատրաստի կերակուրներ,
- ծերանոցային խնամք:

Պարզելու համար, թե արդյոք PACE-ը գործում է Ձեր շրջանում, կամ PACE-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **www.CalPACE.org**: Կամ զանգահարեք «Health Care Options»՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով:

10. Ո՞վ պարտավոր չէ անդամագրվել «Medi-Cal» DMC-ի որևէ ծրագրի:

Եթե Դուք ապրում եք Sacramento-ի շրջանում, հնարավոր է, որ ստիպված չլինեք «Medi-Cal» DMC-ի որևէ ծրագրի անդամագրվել, եթե Դուք՝

- American Indian/Alaska Native եք,
- այնպիսի մի նպաստառու եք, որը ծառայություններ է ստանում foster care-ով, «Adoption Assistance Program»-ով կամ «Child Protective Services»-ով կամ
- նպաստառուի բժշկական (ատամնաբուժական) ազատում (medical (dental) exemption) եք ստանում «Medi-Cal» DMC-ի որևէ ծրագրի անդամագրվելու պահանջից:

«Medi-Cal» DMC-ի ծրագրերին անդամագրվելուց ազատվելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք «Health Care Options»՝

երկուշաբթի-ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով:

11. Կարո՞ղ եմ ես բժշկական (ատամնաբուժական) պատճառով ազատվել «Medi-Cal» DMC-ի ծրագրերի անդամագրումից:

Եթե Դուք ապրում եք **Sacramento-ի շրջանում**, որտեղ կառավարվող ատամնաբուժական խնամքը պարտադիր է, հնարավոր է, որ Դուք կարողանաք բժշկական (ատամնաբուժական) պատճառով ազատում ստանալ «Medi-Cal» DMC-ի որևէ ծրագրի անդամագրվելու պահանջից: Դուք կարող եք բժշկական պատճառով ազատում ստանալ, եթե՝

- բարդ առողջական խնդիր ունեք, և
- **«Medi-Cal»-ի** Ձեր ատամնաբույժը «Medi-Cal Dental» Fee-For-Service-ի (FFS) ատամնաբույժ է և «Medi-Cal» DMC-ի որևէ ծրագրի ցանցում ընդգրկված չէ Sacramento-ի շրջանում:

Եթե ցանկանում եք մնալ «Medi-Cal Dental» FFS-ում, հնարավորին չափ շուտ դիմեք ատամնաբուժական պատճառով ազատում ստանալու համար: Մեծ մասամբ՝ «Medi-Cal» DMC-ի որևէ ծրագրում **90 օր** գտնվելուց հետո, Դուք այլևս չեք կարող ազատվել «Medi-Cal»-ի ատամնաբուժական ծրագրերին անդամագրվելու պարտավորությունից:

Ձեր ատամնաբույժը կամ որևէ փաստաբան կարող է օգնել Ձեզ լրացնել ձևաթուղթը: Բացի այդ, ձևաթղթի մի մասը պիտի Ձեր ատամնաբույժը լրացնի: Լրացված ձևաթուղթը վերադարձրեք «Medi-Cal Health Care Options» (HCO): Բժշկական (ատամնաբուժական) պատճառով ազատում ստանալու երկու եղանակ կա.

1. Զանգահարեք «Medi-Cal» HCO՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով:
2. Կամ այցելեք «Medi-Cal» HCO-ի կայքը՝ **www.healthcareoptions.dhcs.ca.gov** հասցեով:

Եթե ազատման Ձեր հայցը բավարարվի, կարող եք մնալ «Medi-Cal Dental» FFS-ում և պահել Ձեր ատամնաբույժին մինչև Ձեր բժշկական (ատամնաբուժական) պատճառով ազատման ժամկետի ավարտը:

Եթե ազատման Ձեր դիմումը մերժվի, հնարավոր է, որ Դուք կարողանաք պահել Ձեր բժշկին, եթե «Medi-Cal» DMC-ի Ձեր ծրագրից չընդհատվող բուժապասարկում խնդրեք:

Բժշկական պատճառով ազատվելու և ազատման դիմում ներկայացնելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք «Medi-Cal» HCO-ի կայքը՝ **www.healthcareoptions.dhcs.ca.gov** հասցեով:

12. Ինչպիսիքն է Ատամնաբուժական պատճառով նպաստառուի ազատման (BDE) գործընթացը:

Եթե Դուք ապրում եք **Sacramento-ի շրջանում**, որտեղ կառավարվող ատամնաբուժական խնամքը պարտադիր է, հնարավոր է, որ Դուք կարողանաք ատամնաբուժական պատճառով նպաստառուի ազատում ստանալ ատամնաբուժական ծրագրից, եթե չեք կարողանում «Dental Managed Care»-ի (DMC) Ձեր ծրագրից՝

- «շտապ օգնության» (ցավի, այտուցման և/կամ արյունահոսության դեպքում) ժամադրություն ստանալ 24 ժամվա ընթացքում.
- «ընթացիկ» (ոչ հրատապ) ժամադրություն ստանալ չորս (4) շաբաթվա ընթացքում կամ
- «մասնագետի մոտ» ժամադրություն ստանալ Ձեր դիմումի արտոնումից հետո 30 օրվա ընթացքում:

Եթե Դուք դժվարանում եք ժամադրություն ստանալ վերը նկարագրված դեպքերում, ապա կարող եք ատամնաբուժական պատճառով նպաստառուի ազատում ստանալ: Բժշկական (ատամնաբուժական) պատճառով նպաստառուի ազատում ստանալու երկու եղանակ կա.

1. Զանգահարեք Ատամնաբուժական պատճառով նպաստառուի ազատման հեռախոսագծին՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան ժամը 5-ը՝ 1-855-347-3310 համարով:
2. Այցելեք Ատամնաբուժական պատճառով նպաստառուի ազատման կայքը՝ **dental.dhcs.ca.gov/Members/Dental_Managed_Care/Beneficiary_Dental_Exception** հասցեով:

Եթե Ձեր ազատման հայցը բավարարվի, Դուք կարող եք փոխադրվել «Medi-Cal Dental» FFS:

13. Ուրիշ ի՞նչ ծառայություններ կարող եմ ես ստանալ «Medi-Cal»-ի միջոցով:

Փոխադրումները

Եթե Դուք բժշկին, կլինիկա, ատամնաբույժին, հոգեկան առողջության կամ ոգելից խմիչքների կամ թմրանյութերի հետ կապված խանգարումների բուժման վայր ներկայանալու, Ձեր դեղերը վերցնելու կամ «Medi-Cal»-ի ապահովագրական ծածկույթի մեջ մտնող որևէ այլ ծառայության տրամադրման վայր գնալու հնարավորություն չունեք, ապա Դուք կարող եք իրավունակ լինել անվճար փոխադրման ծառայություններ ստանալու համար: Այդ «Non-Medical Transportation» (NMT) ծառայությունները Դուք կարող եք ստանալ ավտոմեքենայով, տաքսիով, ավտոբուսով կամ որևէ այլ հանրային կամ մասնավոր փոխադրամիջոցով: NMT-ն տրամադրվում է «Medi-Cal»-ի ապահովագրական ծածկույթի մեջ մտնող ծառայություններ

ստանալու համար նշանակված ժամադրությունների համար, բայց ոչ «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի միջոցով: Այն ներառում է ավկոհոլի և թմրանյութերի հետ կապված խանգարումների բուժման ծառայությունները:

Եթե առողջական վիճակի պատճառով Դուք չեք կարող օգտվել ավտոմեքենայից, ավտոբուսից, տաքսուց կամ որևէ այլ հանրային կամ մասնավոր փոխադրամիջոցից, ապա կարող եք «Non-Emergency Medical Transportation»-ի (NEMT) ծառայություններ ստանալ՝ Ձեր ժամադրություններին ներկայանալու համար: Դա կարող է լինել շտապ օգնության մեքենա, անվասայլակով կահավորված միկրոավտոբուս կամ փոքր միկրոավտոբուս: NEMT պատվիրելու համար Դուք պետք է որևէ հավաստագրված սպասարկողի կողմից տրված կարգադրագիր ունենաք: NEMT-ն այն անձանց համար է, որոնք չեն կարող օգտվել հանրային կամ մասնավոր փոխադրամիջոցներից: Նման կարգադրագիր կարող է տալ Ձեր նախնական բուժօգնության սպասարկողը, ատամնաբույժը, ոտքի բժիշկը, ինչպես նաև հոգեկան առողջության կամ կախվածության հետ կապված խանգարումը բուժող սպասարկողը:

«Medi-Cal Dental Managed Care»-ի Ձեր ծրագիրը կարող է օգնել Ձեզ փոխադրամիջոցի տրամադրման ժամերի հարցում: Փոխադրման ծառայություն պատվիրելու համար զանգահարեք «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի անդամների սպասարկման բաժին:

Եթե Ձեզ փոխադրում է անհրաժեշտ լինելու, Դուք պետք է ժամադրությունից առաջ որքան հնարավոր է շուտ կապվեք «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի հետ: Եթե դուք բազմաթիվ ժամադրություններ ունեք, կարող եք նաև փոխադրում պատվիրել այդ ժամադրություններին ներկայանալու համար:

14. Որտեղի՞ց կարող եմ ավելին իմանալ կամ օգնություն ստանալ:

«Medi-Cal» DMC-ի ծրագրերի ընտրության մասին հարցերով՝

- Զանգահարեք «Medi-Cal Health Care Options» (HCO)՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով: Կամ այցելեք «Medi-Cal» HCO-ի կայքը՝ **www.healthcareoptions.dhcs.ca.gov** հասցեով:

«Medi-Cal Dental» ծրագրի մասին հարցերով՝

- Զանգահարեք «Medi-Cal»-ի Ատամնաբուժական հեռախոսային ծառայության կենտրոն՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան ժամը 5-ը՝ 1-800-322-6384 (TTY՝ 1-800-735-2922 կամ 711) հեռախոսահամարով: Կամ այցելեք **www.dental.dhcs.ca.gov**:

«Medi-Cal»-ի մասին հարցերի դեպքում՝

- Զանգահարեք «Medi-Cal»-ի Օգնության հեռախոսագծին՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան ժամը 5-ը՝ 1-800-541-5555 համարով: Զանգն անվճար է ու նաև կարելի է օգտվել TTY-ից:

Եթե հարցեր ունեք այն մասին, թե ինչու է «Medi-Cal» DMC-ի Ձեզ ծրագիրը փոփոխվում՝

- Զանգահարեք «Medi-Cal»-ի Ombudsman-ի գրասենյակ՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան ժամը 5-ը՝ 1-888-452-8609 (TTY՝ 711՝ «California State Relay»-ի համար) հեռախոսահամարով: Զանգն անվճար է: Կամ էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկեք նրանց՝ **MMCDombudsmanOffice@dhcs.ca.gov** հասցեով: «Medi-Cal»-ի Ombudsman-ի գրասենյակն օգնում է «Medi-Cal» ունեցող անձանց օգտվել իրենց նպաստներից և իմանալ իրենց իրավունքներն ու պարտականությունները:

15. Ի՞նչ կլինի, եթե ես American Indian կամ Alaska Native անդամ եմ:

Եթե Դուք «Dental Managed Care»-ի որևէ ծրագրում ընդգրկված American Indian/Alaska Native (AI/AN) անդամ եք, կարող եք շարունակել ծառայություններ ստանալ Ձեր նախընտրած Indian Health Care-ի սպասարկողից: Եթե հարցեր ունեք Ձեր առողջապահական նպաստների վերաբերյալ, խնդրում ենք զանգահարել «Dental Managed Care»-ի Ձեր ծրագիր կամ «Medi-Cal Dental» ծրագրի հեռախոսային կենտրոն՝ 1-800-322-6384 հեռախոսահամարով: